ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1383-Ա

ՍԱՐԳԻՍ ԳԱԳԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողայինօրենսգրքի>> 48[1]-րդ, 60-րդ և 76-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին>> 2001 թ. ապրիլի 12-ին թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Սարգիս Գագիկի Վարդանյանի 16.10.2021թ.թիվ 5739 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող 5-րդ փողոց 1/8 հասցեում գտնվող խառը կառուցապատման տարածքից 19.95քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով հատկացնել Սարգիս Գագիկի Վարդանյանին ՝ ոչ հիմնական շինություն (ավտոտնակ) տեղադրելու նպատակով, համաձայն որոշման անբաժանելի մասը հանդիսացող հողամասի սխեմա-հատակագծի (կցվում է):

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի աշխատակազմի իրավաբանական բաժնին Սարգիս Գագիկի Վարդանյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր: Պայմանագրով կառուցապատման իրավունքի ժամկետ սահմանել 10 տարի, իսկ կառուցապատման իրավունքի տարեկանվճար՝ 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ:

3.Սահմանել, որ կառուցապատման իրավունքի պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարում է Սարգիս Գագիկի Վարդանյանը՝ իր միջոցների հաշվին.

ավտոտնակի տեղադրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի վարչական տարածքում ոչ հիմնական շինությունների տեղադրման սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջեվճարելուց և ավտոտնակի էսքիզային նախագիծը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց հետո.

բ) ավտոտնակի տեղադրման հսկողությունը հանձնարարվում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնին:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի
Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և
վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտփաստաթղթերի(փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբեր 17
ք. Արմավիր